



«Եւ հանէ զնոսա ի լեառն մի բարձր առանձինն. եւ այլակերպեցաւ առաջի նոցա, եւ լուսաւորեցան երեսք Նորա իբրեւ զարեգակն, եւ հանդերձ Նորա եղեն սպիտակ իբրեւ լոյս» (Մատթ. ԺԷ. 1-2), «Աստուածաշունչ Հոգ եւ Նորոց Կտակարանաց», էջ 484

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ




«Արք գալիլեացիք, զի՛ կայք հայեցեալ ընդ երկինս. այս Յիսուս՝ որ վերացան ի ձէնջ յերկինս, սոյնպէս եկեսցէ զոր օրինակ տեսէք զնա երթեալ յերկինս»
(Գործք Ա. 11), «Աստուածաշունչ Հնոց եւ Նորոց Կտակարանաց», էջ 569

ԼԻԼԻԹ ՀԱԿՈՒՅԱՆ

«Էջմիածին» հանդեսի խմբագիր

ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑՈՒ ԱՆՁԻՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ
ՆՎԻՐՎԱԾ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
«ԷԶՄԻԱԾԻՆ» ՀԱՆԴԵՍՈՒՄ

«Սուրբ Գրքի տպագրության յոբելեանը
այսօր առիթ է Հաւատաւոր Հայորդեաց Համար՝
երախտագիտութեամբ խոնարհուելու Հայ գրի
բոլոր նուիրեալ մշակների պայծառ յիշատակի,
նրանց անմահ գործի առջեւ»
(Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ.
Կաթողիկոս Ամենայն Հայոց):



այր Աթոռի պաշտոնական ամսագիրը՝ «Էջմիածինը», իբրեւ
կրոնագիտական եւ հայագիտական հանդես, իր էջերում
յուրահատուկ ուշադրութեան է արժանացրել Հայ մշակույթի,
արվեստի ու հայագիտութեան երեւելի գործիչներին: Այս առումով Ոս-
կան Երեւանցին առանձնահատուկ տեղ է գրավում, քանզի ամսագրի
էջերում լույս են տեսել բազում հոգւածներ ու ուսումնասիրութեաններ՝
նրա անձի ու գործունեութեան անգնահատելի դերը լուսաբանելու եւ
գալիք սերունդներին հայ տպագիր գրքի երախտավոր մշակին արժա-
նիորեն ներկայացնելու նպատակով: Ու թեեւ այդ ուսումնասիրութեան-
ները պատկանում են տարբեր տարիների, սակայն դրանց ստվար մասը
տեղ է գտել ամսագրի 1966 թ. ԺԱ.-ԺԲ. բացառիկ համարում՝ նվիրված
հայերեն Աստվածաշնչի տպագրութեան 300 ամյակին: Հայ մշակույթի
գործիչներն ու հայագիտութեան նվիրյալներն իրենց պարտքն են համա-
րել՝ ուսումնասիրելու Ոսկան Երեւանցու՝ մեծանուն հայի արժեքավոր
կյանքն ու արգասաբեր գործունեությունը: Արդյունքում հավաքվել է
հսկայական գրականություն, որի ստեղծման գործում անգնահատելի է
«Էջմիածին» ամսագրի գործունեությունը:

Հայերեն առաջին Աստվածաշնչի տպագրության 350 ամյակին նվիրված այս բացառիկ համարում ներկայացնում ենք Ոսկան Երեւանցուն, ոսկանյան հրատարակչությանը, հայերեն առաջին տպագիր Աստվածաշնչին նվիրված այն բոլոր ուսումնասիրությունները, որոնք հրատարակվել են «Էջմիածին» ամսագրում՝ սկսած 1944 թ.:

Դեռեւս 1946 թ. ամսագրի նոյեմբեր-դեկտեմբեր միացյալ համարում «Հայ տպագիր գրքի պատմության ցուցահանդեսը Երեւանի պետական հանրային գրադարանում» խորագրի ներքո ներկայացվել է Հայ տպագիր գրքի պատմությունը. առանձնահատուկ ուշադրության են արժանացել Հոլանդիայի Ամստերդամ քաղաքում հիմնված «Ս. Էջմիածին» եւ «Ս. Սարգիս Զորավար» տպարանները (1660 թ.), ուր գործել է Ոսկան Երեւանցին եւ 1666-1668 թթ. տպագրել հայերեն առաջին Աստվածաշունչը («Էջմիածին», 1946, ԺԱ.-ԺԲ., էջ 58-63):

1960 թ. Ը. համարում «Աստվածաշնչի հայերեն տպագրության պատմությունից» վերնագրով ծավալուն հոդվածով հանդես է եկել Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Վահան վրդ. Տերյանը (անդ., 1960, Ը., էջ 15-28): Նա համառոտակի անդրադարձել է Հայ տպագրության պատմությանը ԺԶ. դարում Մայր Հայրենիքից հեռու եվրոպական երկրներում, քննել դրանց հետ կապված դժվարությունները, Կաթոլիկ եկեղեցու՝ Աստվածաշունչը լատիներենից թարգմանելու պահանջի հետ անհամաձայնությունների հիմքերն ու դրանց հետեւանքները: Հարցի պատմության քննությունից հետո Վահան վարդապետը ներկայացրել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Ոսկան վրդ. Երեւանցուն, ով երկարամյա տեղագրի փորձերից հետո կարողանում է իրականացնել առաջին տպագիր Աստվածաշնչի հրատարակությունը: Այդ գործի դժվարին ընթացքը մանրամասն ներկայացված է հոդվածում, ուր տեղ է գտել նաեւ Ոսկան Երեւանցու համառոտ կենսագրությունը՝ «Պատմություն վարդապետի Ոսկանայ Երեւանցույ եւ կենցաղավարություն նորին» ինքնակենսագրականից, որը լույս էր տեսել 1669 թ. Ոսկան վարդապետի հրատարակած «Գիրք պատմութեան շարադրեալ Առաքել վարդապետին Դաւրիժեցույ» գրքի ԾԷ. գլխից: Իր հոդվածը Վահան վարդապետն ավարտել է ոսկանյան Աստվածաշնչի արտաքին նկարագրությամբ, կառուցվածքային եւ բովանդակային քննությամբ: Իբրեւ վերջաբան՝ տեղ է գտել Հայ պատմաբանների երախտիքի խոսքը՝ ուղղված Ոսկան վարդապետին եւ նրա կատարած ազգանվեր գործին: Վահան վրդ. Տերյանի կող-

մից նույն ուսումնասիրությունը շարունակաբար հրատարակվել է նաև սեպտեմբեր եւ հոկտեմբեր ամիսներին (1960, Թ., էջ 13-26, Ժ., էջ 46-57):

«Էջմիածին» ամսագրի 1966 թ. ԺԱ.-ԺԲ. միացյալ համարը նվիրվել է հայերեն Աստվածաշնչի տպագրության 300 ամյակին: Նույն թվականի մարտի 11-ին Սրբատառ կոնդակով Ամենայն Հայոց Վազգեն Ա. Հայրապետը հրահանգել էր հոկտեմբերի 8-ը՝ սրբոց Թարգմանչաց տոնախմբությունը եւ «Հայ մշակույթի օրվա» հանդիսությունը նվիրել Աստվածաշնչի հայերեն առաջին տպագրության 300 ամյակին: Միջոցառումների ընթացքում հոկտեմբերին տեղի է ունեցել հանդիսավոր նիստ՝ մասնակցություն մե Վազգեն Ա. Վեհափառ Հայրապետի, Տ. Կոմիտաս եւ Տ. Տիրայր եպիսկոպոսների, ՄՄ տնօրեն Լ. Խաչիկյանի, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամների, «Էջմիածին» ամսագրի խմբագրակազմի, ԳՀԾ-ի եւ ԵՊՀ-ի դասախոսների եւ այլոց: Նիստի ընթացքում «Ոսկանյան Աստվածաշնչի տպագրությունը» թեմայով զեկույց է կարդացել ԵՊՀ դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու, մատենագետ Ռ. Իշխանյանը, ով անդրադարձել է Աստվածաշնչի տպագրական եւ բնագրային առանձնահատկություններին, արտաքին ձեւավորմանը, տպաքանակին եւ դրանով լուծված մի շարք խնդիրներին: Խոսելով ոսկանյան Աստվածաշնչի մասին՝ Ռ. Իշխանյանը չի առանձնացնում ոսկանյան տպարանը, որն Ամստերդամում, Լիվոռնոյում եւ Մարսելում անընդմեջ աշխատել է 25 տարի՝ հրատարակելով հայերեն 40 անուն գիրք, ինչն իրոք աննախադեպ էր Հակոբ Մեղապարտից հետո 150 տարիների ընթացքում: Նիստի ընթացքում զեկույցներով հանդես են եկել ակադ. Ա. Ղարիբջանը, Հ. Ժ. Սիրունին եւ Ամենայն Հայոց Հայրապետը (1966, Թ.-Ժ., էջ 39-51):

Ամսագրի տոնական՝ ԺԱ.-ԺԲ. բացառիկ համարում ընդարձակ խմբագրականից հետո զետեղված է Ոսկան Երեւանցու բացատրական առաջաբանը՝ ուղղված Հակոբ կաթողիկոսին՝ Աստվածաշնչի խմբագրական եւ տպագրական աշխատանքների ծանոթությամբ՝ «Բանահիւսութիւն առ վեհագոյն Հայրապետն Հայոց Տէր Յակոբ, ի նուստտէ ումեմնէ բանի սպասաւորէ Ոսկան վարդապետէ յաղագս տպագրութեան տառից աստուածայնոց» (ԺԱ.-ԺԲ., էջ 6-7): «Վկայություններ Ոսկան Երեւանցու անձի եւ գործի մասին» խորագրի ներքո ներկայացվել են Մաղաքիա արք. Օրմանյանի, Լեոյի, Գ. Լեւոնյանի՝ Ոսկան Երեւանցու գործի գնահատման տեսությունները (էջ 17-19): Ներսես Ժ. վրդ. Պողապալյանը հանդես է եկել Ոսկան Երեւանցու կենսագրությունը համառոտակի ներկայացնող հոդվածով (էջ 20-27), իսկ Ռ. Իշխանյանը «Ոսկանյան տպա-

րանը եւ նրա հրատարակած Աստվածաշունչը» լայնածավալ հոգւածում նկարագրել է հայկական տպագրութեան սկզբնավորումը, զարգացման ընթացքը, ինչն էլ, ըստ հեղինակի, նախապատրաստել է ոսկանյան տպարանի գործունեութիւնն ու Աստվածաշունչի տպագրութիւնը, քանզի մոտ մեկ ու կես դար հայ մշակույթի գործիչների, մանավանդ հայ տպագրիչների եռանդուն ջանքերով ու աշխատանքով միայն կարելի էր բացատրել ոսկանյան տպարանի այնպիսի գործունեութիւնը, որն արդեն հաղթահարել էր «...հայկական տպագրութեան մեջ եղած մի շարք թուլութիւններն ու թերութիւնները» (էջ 130-158):

Հ. Մխիթարյանն իր «Ոսկան Երեւանցին իբրեւ քերականագետ» (210-216) հոգւածում ներկայացրել է Ոսկան վարդապետին՝ իբրեւ հայոց լեզվի լավագոյն գիտակի՝ նրա հայրենասիրութիւնն ու մայրենի լեզվի նկատմամբ հոգատարութիւնը պայմանավորելով ծնողական դաստիարակութեամբ եւ անսահման սիրով դեպի Հայաստանն ու Երեւանը: Ոսկան Երեւանցու «Քերականութեան գիրք, համառօտիւք ծայրաքաղաք արարեալ յաղագս մանկանց եւ նորավարժից կրթութեան, ի տառս մատենից եւ ի գիտութիւն մասանց բանի ըստ քերթութեան արհեստի» աշխատութիւնը լույս է տեսել 1666 թ. Ամստերդամի իր ղեկավարած տպարանում: Գրքի հիշատակարանում Ոսկան վարդապետը բացատրում է, որ ինքը ոչ թե հորինել, այլ թարգմանել է լատին քերականներից՝ վերցնելով այն ամենը, ինչ ինքը պիտանի եւ կարեւոր է համարել: Ու չնայած գրքի թարգմանաբանական բնույթին՝ այն խոշոր դեր է խաղացել հայ իրականութեան մեջ՝ նպաստելով հայոց լեզվի ուսուցմանը ինչպես հայաստանյան, այնպես էլ գաղթավայրերի դպրոցներում: Հոգւածագրի կողմից հանգամանորեն քննվել է քերականագիտական այս գրքի կառուցվածքը, եզրույթների սահմանումը, դրանց համեմատութիւնը նախորդ հայ քերականների աշխատութիւններում տրված մեկնաբանութիւնների հետ: Սակայն Ոսկան Երեւանցու ամենամեծ ներդրումը հայ քերականագիտութեան մեջ հոգւածի հեղինակը համարում է գոյականի հոլովման համակարգի եւ մասնավորապես հոլովների թվի սահմանումը, «...որով նա դրսեւորեց հայերենին լավ գիտակ լինելու, քերականական հարցերը հստակ պատկերացնելու իր կարողութիւնները» (էջ 212):

Խ. Սամվելյանի «Աստվածաշունչի տպագրութիւնն ու պոլիգրաֆիական արվեստը» (216-242) հոգւածը ներկայացնում է ոսկանյան տպարանի նախապատմութիւնը, ունեցվածքը, տառային տնտեսութեան հարստացումը Երեւանցու օրոք: Առանձին ենթագլուխներով անդրա-

դարձել է ոսկանյան տպարանի տպագրիչներին, սրբագրական, կազմարարական աշխատանքներին, ապա՝ առաջին Աստվածաշնչի շարատպական արվեստին՝ տառատեսակներին, տառերի չափերի բազմազանությունը եւ դրանց համեմատությունը նախորդ տարիների տառատեսակների եւ տառազարդերի հետ, ինչպես նաեւ Ոսկան Երեւանցու պատվիրած «նոտրդերի» առանձնահատկություններին:

Հայերեն Աստվածաշնչի առաջին տպագրության համար ընտրված տարբերակի քննությունն են ներկայացրել Ք. Կորկոտյանն ու Ն. Ոսկանյանը (էջ 168-175) իրենց համահեղինակած «Հայերեն Աստվածաշնչի առաջին տպագրությունը եւ նրա տարբերակը» հոդվածում: Խոսելով ոսկանյան Աստվածաշնչի մասին՝ նրանք առանձնացնում են Հայերեն Աստվածաշնչի եւ լատին Վուլգատայի միջեւ գոյություն ունեցող տարբերությունները, որոնք փորձել է ցույց տալ նաեւ Երեւանցին: Ուսումնասիրության ընթացքում հեղինակները քննել են շուրջ 30 օրինակ գիրք, որոնցում տարբերություններ չեն նկատել, սակայն ԱՄՆ-ից ստացված ոսկանյան Աստվածաշնչի երկրորդ մասը՝ Նոր Կտակարանը, 26 էջով պակաս է եղել նախորդ օրինակներից: Համեմատությունից պարզվել է, որ այդ օրինակում բացակայում են «Աղօթք Մանասէի արքայի Յուդայի» եւ «Գիրք Եզրասայ չորրորդ» գրքերը: Այդ եւ հիշատակարանում եղած տարբերությունների հիման վրա հեղինակները առաջ են քաշում Աստվածաշնչի՝ երկու տարբերակով հրատարակվելու իրենց տեսությունը՝ բացատրելով այն ոչ միայն տպագրական անհրաժեշտությամբ, այլեւ Երեւանցու կողմից «...գալականաբանական մտահոգություններից ելնելով», ուստի հեղինակները եզրակացնում են, որ տպագրված Աստվածաշնչի առաջին տարբերակը գրաքննության կողմից ընդունվելուց հետո Ոսկան Երեւանցին, իբրեւ բնագրագետ, մտածում է իսկական հայկական Աստվածաշունչ տպագրելու մասին, որը զերծ կլինի կաթոլիկ նորամուծություններից եւ կբավարարեր Հայ Եկեղեցու պահանջները:

Ոսկանյան Աստվածաշնչի աշխարհաբար թարգմանության եւ հրատարակության պատմությանն է անդրադարձել Վահան Կապ. Տերյանը (էջ 176-189), ով մանրամասն ներկայացրել է ոսկանյան Աստվածաշնչի աշխարհաբար թարգմանության երախտավորների ջանքերը:

Ոսկանյան Աստվածաշնչի բնագրային առանձնահատկություններին է անդրադարձել նաեւ Հ. Ս. Անասյանը «Աստվածաշունչ մատյանի հայկական բնագիրը» լայնածավալ հոդվածում (էջ 71-97), ուր նախ ներկայացվել են Սահակ-Մեսրոպյան թարգմանությունը եւ նրանց կա-

նոնները, ապա Ե. դարում հանդիպող առաջին եւ երկրորդ թարգմանությունների բնագրական տարբերակումը, ինչպես նաեւ հայկական թարգմանությունների սկզբնագրերը եւ դրանց որոշակի հատվածների ներմուծումը ոսկանյան Աստվածաշունչ: Հոգվածի էջերում տեղ է գտել նաեւ Վուլգատայի իրական ազդեցության եւ հայ դասական բնագրի խաթարման լուսաբանումը:

Ոսկան Երեւանցու տպագրած Աստվածաշնչի օրինակին է անդրադարձել նաեւ Ս. Քոլանջյանը (էջ 98-129), ով ի մասնավորի քննել է Հեթում Բ.-ի ձեռագիրը եւ ոսկանյան Աստվածաշնչերի ընդհանրությունները. քննության արդյունքում հեղինակը եկել է այն համոզման, որ ոսկանյան Աստվածաշունչը Հեթումի ձեռագրի ներկայացուցիչն է, չնայած՝ հեղինակի կողմից նշված բազում վկայություններից երեւում է, որ ոսկանյան Աստվածաշնչի նախագաղափար օրինակի հարցի շուրջ հայ բանասիրության մեջ առաջ են եկել թեր եւ դեմ, երբեմն էլ անորոշ կարծիքներ: Հոգվածագրի կողմից մանրազնին ուսումնասիրվել են ՄՄ հնագույն ձեռագիր Աստվածաշնչերը (ներառյալ Հեթում Բ.-ի ձեռագիրը)՝ վերհանելու ոսկանյան տպագրության հետ համընկնող փոփոխություններն ու սրբագրությունները: Այս ամենի արդյունքում հեղինակը եկել է այն եզրահանգման, որ Ոսկան Երեւանցին հիմք է ընդունել արքայական գրչագիրը, «...իսկ Շոշում Ղազար Վալաքացու կամ Բաբերդացու խմբագրությամբ օրինակվածը հիշատակել է իբրեւ լատինական ձեռով առաջին տնատված եւ այլ լրացումներ ունեցող Աստվածաշունչ» (էջ 107): Ն. Թահմիզյանը ներկայացրել է Ոսկան Երեւանցու ջանքերով հայկական խազագրության արվեստը ձեռագրական աշխարհից տպագիր գրքին փոխանցելու ջանքերը «Ոսկան վարդապետն ու խազագրության արվեստը» հոգվածում (էջ 159-167):

«Էջմիածին» հանդեսում Ոսկան Երեւանցին փառավոր տեղ է զբաղեցրել բոլոր ժամանակներում: Դրա վառ ապացույցն այն է, որ ոչ միայն հոբելյանական հատուկ համարի էջերում, այլեւ տարբեր ժամանակներում ամսագիրը պարբերաբար անդրադարձել է Ոսկան Երեւանցու անձին ու գործին, դեռ ավելին՝ ամսագիրն իր գրախոսականներով արձագանքել է նաեւ Ոսկան Երեւանցուն նվիրված աշխատություններին: 1976 թ. ԺԲ. համարում «Փոխան գրախոսականի» խորագրի ներքո լույս է տեսել Կարապետ եպս. Ամատունու «Ոսկան Երեւանցի եւ իր ժամանակը» մենագրության գրախոսականը, որում գրքի հեղինակին մեղադրում են Ոսկան Երեւանցուն կաթոլիկությունը հարած լինելը «ակնարկելու»

Համար: Իբրեւ վերջաբան տեղադրված է 1976 թ. սեպտեմբերի 27-ին Հայոց Հայրապետի գահակալության 20 ամյակի առիթով նրա հետեւյալ հաստատումը. «Հայաստանյայց Եկեղեցին Հայ ժողովրդի եկեղեցին է, նրա մայրն ու դաստիարակը եւ պահապան հրեշտակը բոլոր ժամանակներում» (1976, ԺԲ., էջ 3):

Ի պաշտպանություն Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու եւ նրա հավատավոր ժողովրդի՝ ամսագրի 1984 թ. Բ. համարում լույս է տեսնում ՄՄ տնօրեն Լ. Խաչիկյանի՝ 1977 թ. գրված նամակը՝ ուղղված Կարապետ եպս. Ամատունուն՝ «Ոսկան Երեւանցի եւ իր ժամանակը» գրքի հրատարակության առիթով: Նամակն իր ժամանակին ուղարկվել էր «Բազմավիպին»՝ հրատարակելու խնդրանքով, սակայն այն չի հարգվել: Ու թեեւ մի քանի տարի ուշացումով, ամսագրի խմբագրակազմը որոշել է անպայման հրատարակել այն՝ Ոսկան Երեւանցուն Կաթողիկ եկեղեցու հետ հաղորդակցության մեջ մեղադրողներին ի պատասխան: Նամակում պատմական փաստերով ներկայացված է Ոսկան Երեւանցին իբրեւ հայրենասեր, եկեղեցասեր Հայ ազգի հարազատ զավակ, ով «...երբեք չի դավաճանել իր սկզբունքներին, այլ միշտ ու ամենուրեք, ուր էլ որ նետել են նրան Հայ տպագրության գործի շահերը, մնացել է իր առաքելական բարձր դիրքերում՝ որպես ազգային պաշտոնյա ու Հայ մշակույթի լիազոր ներկայացուցիչ» (1984, Բ., էջ 47-50):

«Էջմիածին» հանդեսում տարբեր ժամանակներում Ոսկան Երեւանցուն նվիրված հոդվածները նպատակ են հետապնդել՝ ընդլայնելու նրա եւ՝ կենսագրական, եւ՝ գործնական կյանքի տեղեկությունները: Այս առումով հետաքրքրական է Խ. Սամվելյանի «Ոսկան վարդապետի ուսումնառությունը Երեւանում» հոդվածը՝ նվիրված նրա ուսումնառության 365 ամյակին (1997, Ժ., էջ 106-113). մի քանի տարի անց՝ 2000 թ., նույն հոդվածագրի «Առաքել Դավրիժեցու «Պատմություն» երկի ԾԷ. գլուխը» վերնագրով հոդվածում դարձյալ ներկայացված է Երեւանցու կենսագրությունը՝ իր իսկ տված ինքնակենսագրականի հիման վրա (2000, է., 66-67): Նույն հեղինակի ուսումնասիրությունների արդյունքում ամսագրում հրատարակվել են Ոսկան Երեւանցուն նվիրված եւս 2 հոդվածներ՝ «Աստվածաշնչի հրատարակության իրականացումը Ոսկան Երեւանցու կողմից» (2000, Ա., էջ 127-138) եւ « Ոսկան Երեւանցին ապավինում է Լյուդովիկոս XIV թագավորին» (2003, Զ., էջ 58-63): Վերջին հոդվածում տեղ է գտել նաեւ Ո. Երեւանցու նամակն՝ ուղղված Լյուդովիկոս ԺԴ.-ին:

«Երեւանցու իմաստասիրական երկի գործնական արժեքն ու կարեւորությունը» (անդ, 1998, Դ., էջ 116-135) հոդվածում Հ. Միրզոյանն ըստ արժանվոյն գնահատել է Ոսկան Երեւանցուն իբրեւ փիլիսոփա՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով նրա իմաստասիրական աշխատությունը, որը կարեւոր է համարում «...հեղինակի դավանաբանական հավատամքը որոշելու համար» (անդ, էջ 119):

Ոսկան Երեւանցուն արժանիորեն գնահատելու կարեւորությունից ելնելով՝ «Էջմիածին» հանդեսի 2000 թ. Գ. համարում լույս է տեսել «Ոսկան Երեւանցու տպարանի ճակատագիրը Մարսելում» (անդ, 2000, Գ., էջ 118-131) վերնագրով թարգմանական մի հոդված՝ Ժ. դարի ֆրանսիացի գրող եւ բանասեր Ժ.-Տ. Բորիի «Տպարանի սկզբնավորումը Մարսելում» գրքից: Հեղինակը պատմական բազմաթիվ փաստաթղթերի եւ արխիվային նյութերի հիման վրա մանրամասն նկարագրել է այն բազում արգելքներն ու դժվարությունները, որոնց ենթարկվել են Ոսկան Երեւանցին եւ նրա հաջորդները Մարսելում իրենց հրատարակչական տասնամյա գործունեություն ընթացքում: Թարգմանությունը կատարվել է Պ. Շահբազյանի կողմից:

Ուշիի Ս. Սարգիս վանահամալիրում իրականացրած պեղումների արդյունքում Ոսկան Երեւանցու վանահայրություն տարիների շինարարական եւ վերանորոգչական աշխատանքներին է անդրադարձել Ֆ. Բաբայանը՝ «Ուշիի Ս. Սարգիս վանական համալիրը եւ Ոսկան Երեւանցին» հոդվածով (անդ, 2013, Ա., էջ 105-109):

«Մաշտոցի»՝ Ոսկան Երեւանցու հրատարակությունն է անդրադարձել Տ. Տաթեւ վրդ. Հակոբյանը (2010, Ե. 38-53), ով իր հոդվածում մանրամասն ներկայացրել է «Մաշտոց» ծիսամատյանի ձեռագրային եւ ոսկանյան հրատարակության ընդհանրություններն ու տարբերությունները՝ բնագրերով եւ վերլուծությամբ: Ուսումնասիրության արդյունքում հոդվածագիրը եզրակացնում է, որ «Ոսկանն իր առջեւ նպատակ է դրել հրատարակել եկեղեցական ամենօրյա արարողությունների համար անհրաժեշտ Մաշտոց, եւ այստեղ զետեղված են բացառապես քահանայի կողմից կիրառվող եկեղեցա-ժողովրդական ամենագործածական կանոնները. եպիսկոպոսական ոչ մի կանոն չկա» (անդ, էջ 40):

Ոսկան Երեւանցու տպագիր քերականության ձեռագիր օրինակին է անդրադարձել Տ. Մանուկյանն իր «Ոսկան Երեւանցու տպագիր քերականության օրինակները» հոդվածում (2016, Զ., էջ 50-61): Քննության

առարկան «Քերականութեանց գիրք առաջաւոր» վերնագրով՝ ՄՄ թ. 2295 ձեռագրի 49ա-107ա էջերն է զբաղեցնում:

Այսպիսով, ինչպես երեւում է, «էջմիածին» հանդեսի էջերում հավաքվել է ուշագրավ տեղեկությունների եւ ուսումնասիրությունների շարք Ոսկան Երեւանցու՝ մեր ազգի տպագրության պատմության մեջ ունեցած անգնահատելի դերի մասին: Այսքանով, սակայն, չեն սահմանափակվում նրան նվիրված ուսումնասիրությունները, եւ ամսագիրն իր էջերում դեռ կշարունակի հրատարակել ազգանմեր հայ հոգեւորականին, փիլիսոփային, քերականագետին եւ տպագրական գործի լավագույն գիտակին նվիրված հոգւածներ՝ գալիք սերունդներին հարուստ ու ընդգրկուն գրականութուն ժառանգելու նպատակով:

